



JUDICIARY BRANCH  
GENERAL INSPECTION ORGANIZATION  
OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

## ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

### Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Իրանի Իսլամական Հանրապետության վերահսկողության գլխավոր կազմակերպության միջև

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն և Իրանի Իսլամական Հանրապետության վերահսկողության գլխավոր կազմակերպությունը (այսուհետև՝ Կողմեր) .

Ցանկանալով Կողմերի միջև ընդլայնել բարեկամական և գործնական հարաբերությունները կոռուպցիայի դեմ պայքարում, մարդու իրավունքների պաշտպանության, դիմումների քննության, ինչպես նաև յուրաքանչյուր Կողմի իրավասության և նպատակների շրջանակներում այլ լիազորությունների իրականացման բնագավառում, այդ կերպ նպաստելով իրենց պետություններում անձանց իրավունքների պաշտպանությանը փոխադարձության և փոխշահավետության հիման վրա, օրենքներին և ընթացակարգերին համաձայն

Պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### ՀՈԴՎԱԾ 1

#### Համագործակցության առարկան

Կողմերը իրենց պետությունների ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան համագործակցում են կոռուպցիայի դեմ պայքարում,



JUDICIARY BRANCH  
GENERAL INSPECTION ORGANIZATION  
OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

մարդու իրավունքների պաշտպանության, դիմումների քննության, ինչպես նաև յուրաքանչյուր Կողմի իրավասության և նպատակների շրջանակներում այլ լիազորությունների իրականացման բնագավառում:

## ՀՈԴՎԱԾ 2

### Համագործակցության ոլորտները

1. Փորձի փոխանակում կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, դիմումների քննության, ինչպես նաև յուրաքանչյուր Կողմի իրավասության և նպատակների շրջանակներում այլ լիազորությունների իրականացման բնագավառներում, ներառյալ օրենսդրության, ինչպես նաև պետական մարմինների կողմից ընդունված կարևոր որոշումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակություն;
2. Պատվիրակությունների կամ փորձագետների փոխադարձ այցեր կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, դիմումների քննության, ինչպես նաև յուրաքանչյուր Կողմի իրավասության և նպատակների շրջանակներում այլ լիազորությունների իրականացման բնագավառներում փորձի փոխանակության նպատակով, համաձայն նախապես մշակված փոխանակության ծրագրի ;
3. Կողմերը կկազմակերպեն ֆորումներ, աշխատանքային հանդիպումներ, գիտաժողովներ և կլոր սեղաններ, ապահովելու միջազգային համագործակցությունը իրավական օգնության բնագավառում, նաև բազմակողմ միջոցառումների շրջանակներում դիմումների քննության և այլ լիազորությունների իրականացման բնագավառում:



### ՀՈԴՎԱԾ 3

#### Կիրառում

1. Սույն Հուշագրում նշված գործողությունները պետք է իրականացվեն Կողմերի կողմից հստակ մշակված պլանների և ծրագրերի միջոցով: Նշված ծրագրերը և պլանները պետք է հստակեցնեն նպատակները, ֆինանսական կարգավորումները և այլ մանրամասները, նախանշված Կողմերի կողմից:
2. Կողմերի աշխատանքային լեզուն անգլերենն է:
3. Կողմերը նշում են իրենց հաստատության պատասխանատուի տվյալները հետևյալ կերպ.  
Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի միջազգային համագործակցության համար պատասխանատու կառույցը:

Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր վերահսկիչ կազմակերպության միջազգային կառույցը:

### ՀՈԴՎԱԾ 4

#### Ծախսերը

1. Յուրաքանչյուր կոնկրետ համագործակցության բնագավառում ֆինանսական ծախսերը համաձայնեցվում են Կողմերի կողմից:
2. Յուրաքանչյուր Կողմ կրում է իր ներկայացուցիչների գործուղման հետ կապված միջազգային տրանսպորտային փոխադրման, կեցության և օրապահիկի ծախսերը: Պատվիրակությունը հյուրընկալող կողմը կրում է երկրի տարածքում պատվիրակության անդամների ներքին փոխադրման ծախսերը: Ծախսերի հետ կապված այլ մանրամասները կարգավորվում են ըստ յուրաքանչյուր կոնկրետ միջոցառման: